

Կ Ա Ր Գ

ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են ընդերքի մասին երկրաբանական տեղեկության անկախ փորձաքննության իրականացման գործընթացի հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգով նախատեսված անկախ փորձաքննության իրականացման նպատակն է ընդերքօգտագործողին տրամադրված երկրաբանական և այլ տեղեկության արժանահավատության ճշտումը, եթե փոխվել են ընդերքի տեղամասի կառուցվածքի, կազմի, քանակի, դրանում օգտակար հանածոների առկայության և այլ հատկությունների, ինչպես նաև ընդերքի օգտագործման տեխնիկատնտեսական ցուցանիշների մասին տվյալները և մոտեցումները:

3. Ընդերքի մասին երկրաբանական տեղեկության անկախ փորձաքննություն կարող են իրականացնել համապատասխան որակավորում ունեցող իրավաբանական և ֆիզիկական անձինք, այդ թվում՝ միջազգային փորձագետները:

4. Անկախ փորձաքննությունն իրականացվում է ընդերքօգտագործողի նախաձեռնությամբ՝ սեփական միջոցների հաշվին, և փորձաքննության ենթակա հարցերի շրջանակը սահմանում է ընդերքօգտագործողը:

5. Անկախ փորձագետի ընտրությունը կատարվում է ընդերքօգտագործողի կողմից:

6. Անկախ փորձաքննության ենթակա են ընդերքի տեղամասի մասին հետևյալ երկրաբանական տեղեկությունները՝

1) տարածաշրջանային երկրաբանական ուսումնասիրության նյութերը.

2) օգտակար հանածոների հանքավայրերի որոնմանը, հետախուզմանը և գնահատմանը վերաբերող նյութերը.

3) շահագործվող ու շահագործման նախապատրաստվող հանքավայրերի լրահետախուզմանը և շահագործական հետախուզմանը վերաբերող նյութերը.

4) հանքավայրի կոնդիցիաների վերագնահատման, վերահիմնավորման ու օգտակար հանածոյի պաշարների ճշտման, ինչպես նաև արդյունաբերական նշանակությունը կորցրած կամ հետագա աշխատանքների արդյունքում չհավաստված պաշարների դուրսգրման և ընդերքօգտագործման պայմանագրում ու նախագծում համապատասխան փոփոխությունները:

7. Եթե անկախ փորձաքննության արդյունքներով էապես փոխվում են հանքավայրի երկրաբանատնտեսագիտական գնահատականը կամ ընդերքի տեղամասի երկրաբանական կառուցվածքի և այլ հատկությունների վերաբերյալ պատկերացումները, ապա ընդերքօգտագործողն անկախ փորձագետի եզրակացությունը և նրա կողմից փորձաքննության ենթարկված նյութերը կարող է ներկայացնել լիազոր մարմին:

8. Անկախ փորձաքննության արդյունքների և լիազոր մարմնի կողմից ընդերքօգտագործողին տրված երկրաբանական տեղեկության անհամապատասխանության դեպքում, ինչպես նաև անկախ փորձաքննության արդյունքների արժանահավատությունն ստուգելու համար լիազոր մարմինը մեկամսյա ժամկետում ընդունում է որոշում անկախ փորձագետի եզրակացությունը և փորձաքննության ենթարկված նյութերն

ընդերքաբանական փորձաքննության ենթարկելու վերաբերյալ՝ դրա մասին օրենքով սահմանված կարգով տեղեկացնելով ընդերքօգտագործողին:

9. Եթե անկախ փորձաքննության արդյունքների հիման վրա պարզվում է, որ առկա է շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության մասին տեղեկատվության անհամապատասխանություն, ապա ընդերքօգտագործողից անկախ փորձագետի եզրակացությունը և փորձաքննության ենթարկված նյութերն ստանալուց հետո լիազոր մարմինը շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության մասին տեղեկատվությունը ներկայացնում է բնապահպանական ոլորտի լիազոր մարմին:

10. Լիազոր մարմինը ներկայացված նյութերն ընդերքաբանական փորձաքննության է ենթարկում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

11. Անկախ փորձաքննության արդյունքների և լիազոր մարմնի կողմից ընդերքօգտագործողին տրված երկրաբանական տեղեկության համապատասխանության դեպքում ընդերքօգտագործողի՝ լիազոր մարմին ներկայացրած անկախ փորձագետի եզրակացությունը և անկախ փորձաքննության ենթարկված նյութերն ընդերքաբանական փորձաքննության չեն ենթարկվում, և նախկինում կատարված ընդերքաբանական փորձաքննության արդյունքները մնում են անփոփոխ:

12. Նախկինում կատարված ընդերքաբանական փորձաքննության արդյունքները մնում են անփոփոխ, եթե անկախ փորձաքննության արդյունքները լիազոր մարմնի կողմից իրականացված ընդերքաբանական փորձաքննության ընթացքում չեն հավաստվում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ